



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




13355

# ԱԶԳԱՅԻՆ

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՖԱՀԵՑՈՑ

Ազգային Ընդհանուր ժողովի միաձայն հաւանութեամբն  
ընդունուած և սուրագրուած և Պոլիս, Հայոց պատ-  
րիաբարանում 24 Մայիսի 1860 թ.



Թիֆլիս  
Տարբան Հասպերանօց

1914



342  
4-23

«Люблю» - я люблю № 2

## Ազգային

ԱԱՅՍԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ԹԵՐՄԱԿԱՑՈՑ

4-548

• \* •

Ազգային Բնդիհանուր ժողովի միաձայն հաւասնութեամբն ընդունուած եւ ստորագրուած Կ. Պոլիս, Հայոց պատրիարքանում 24 Մայիսի 1860 թ.



2010



Թիֆլիս  
Տպարան «Էսպերանտո»  
1913

7386ccah

20011

J49.P9.1

J49.P9.1 P00012

00003272-0000-0

Information contained in this document does not necessarily represent  
the views or policies of the Government of Canada, nor does it  
necessarily reflect the opinions of the author.

# ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒԻՆՔ

Ա.

Ազգին ամեն մէկ անհատը առ ազգը պարտաւորութիւններ ունի. ազգն ալ իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի ազգէն և ազգն անհատներէն:

Այս պարտիքներն որոշող և այս իրաւունքները հաստատող իշխանութիւնը ազգային վարչութիւն կը կոչուի, որում Օսմանեան տէրութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց տնօրէնութիւնը:

Բ.

Ազգային վարչութիւնը հիմնեալ է իրաւանց ու պարտեաց սկզբունքին վրայ, որ արդարութեան սկզբունք է. իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինաւորութեան սկզբունքն է. ամենայն տնօրէնութիւն ազգային որ չէ համաձայն սոյն սկզբանց, ոչ արդար է և ոչ օրինաւոր:

Գ.

Ազգն ու ազգային վարչութիւնը փոխադարձ պարտիքներով կապուած է իրարու հետ:  
Դ.

Ազգայնոց պարտականութիւնն է՝ ազգին պիտոյից պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կարողութեան չափովը, ազգին խնդրած ծառայութեանցը յանձնառու ըլլալ, և ազգային վարչութեան ըրած անօրէնութեանցը ազգասիրաբար հնազանդիլ:

Ե.

Ազգային վարչութեան պարտականութիւնն է՝ ազգին բարոյական, մտաւորական և նիւթական պիտոյիցը հոգ տանիլ, Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնները անխախտ պահել, մարդկութեան հարկաւ որ եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը ազգին ամեն աստիճանի թէ մանչ և թէ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնները պայծառ պահել, ազգին հասոյթները օրինաւոր կերպով աւելցնել և ծախքերը իմաստութեամբ տնտեսել, ազգին ծառայութեանը մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը լաւցնել և ապագան անդորրել, կարօտելուց խընամ տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէճերը արդարութեամբ խաղաղել և վերջապէս ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը աշխատութիւն չը խնայել:

## Զ.

Ահա այս ամեն պարտիքները կատարելու և իրաւունքները ապահովելու դիտմամբ է որ ազգը հետևեալ կերպով կը սահմանադրէ զազգային գործոց վարչութիւնը:

Դլուխ Ա.

## Ա.ԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կազմութիւն

1. Բարձրագոյն Դրան շնորհած արտօնութեանը համեմատ՝ Ազգային վարչութիւնը երեսփոխանական է.

Ազգը ընդհանուր ժողով մը կըներկայանայ և անոր միջնորդութեամբը կը վարէ զազգային իշխանութիւնը:

Ընդհանուր ժողովը՝ ազգին ընդհանրական գործոց տնօրէնութիւնն իրեն պահելով, սովորական գործոց վարչութիւնը երկու ազգային ժողովներում կը յանձնէ, կրօնական գործոց մասը՝ կրօնական ժողովի մը, քաղաքական գործոց մասը՝ Քաղաքական ժողովի մը. իսկ խառն գործոց տնօրէնութիւնը՝ այս երկու ժողովոց առժամանակեայ մէկտեղ գալով ձեւացած խառն ժողովին կը յանձնէ:

2. Ազգային վարչութիւնը՝ աշխատութեանց բաժանումը բարեկարգութեան առաջին պայ-

ման բռնելով, ազգային գործոց մէջ տեսչութիւնն ու մատակարարութիւնը իրարմէ կը դատէ երկու կարգ խորհուրդներու միջոցով:

Տեսչութեան համար՝ ազգային գործոց գլխաւոր մասերուն յատկացեալ չորս ազդային խորհուրդ կը հաստատէ, որ են՝ Աւսումնական խորհուրդ, Տնտեսական խորհուրդ, Եկամտական խորհուրդ, Դատաստանական խորհուրդ, և վաւերագործութիւնն իրեն պահելով՝ այս խորհուրդներուն իւրաքանչիւրին ձեռնհասութեանը կը յանձնէ ազգային գործոց այս իւրաքանչիւր մասին տեսչութիւնը:

Մատակարարութեան համար՝ Պօլսի մէջ թաղական խորհուրդներ կը հաստատէ թաղին եկեղեցւոյն անուամբը, և ամեն մէկ թաղին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր թաղական խորհրդին կը յանձնէ, ազգային խորհրդոց տեսչութեանը տակը:

3. Ազգային վարչութեան պաշտօնական գլուխ՝ Պօլսի պատրիարքն է, և կեդրոն՝ Պօլսի պատրիարքարանը:

Ազգային ժողովներն ու խորհուրդները իւրենց գլուխ ունենալով ազգին պատրիարքը՝ Պօլսի մէջ ազգային վարչութեան կենդրոնական մասը կը կազմեն, որոց իշխանութիւնը բոլոր Տաճկաստանի Հայոց վրայ կը տարածուի:

4. Ազգային կեդրոնական վարչութիւնը Տաճկաստանի առաջնորդանիստ գաւառներուն մէջ

կը ներկայանայ գաւառական ժողովներով, որոնք Փօլսէ դուրս ազգային վարչութեան գաւառական մասը կը կազմեն, որոյ պաշտօնական գլուխ վիճակին առաջնորդն է, և կեղրոն՝ տեղին առաջնորդարանը:

5. Գաւառական վարչութիւնը նոյն փոխադարձ պարտեօք կապուած է գաւառաբնակ ազգայնոց հետ, ինչպէս կեղրոնական վարչութիւնը ընդհանուր ազգայնոց հետ. և իրեն յարացոյց պիտի բռնէ զկեղրոնական վարչութիւնը:

6. Գաւառական վարչութիւնը առաջնորդանիստ քաղաքներու մէջ կրօնական և քաղաքական ժողովներ կը հաստատէ և անոնց կը յանձնէ գաւառին կրօնական և քաղաքական գործոց տեսչութիւնը:

Այս ժողովները քաղաքին թաղերուն մէջ Թաղական խորհուրդներ կը հաստատեն իրենց վերատեսչութեանն ու համարառութեանը տակ և անոնց ձեռքովը կը մատակարարեն տեղական գործերը, նոյն յարաբերութիւններով, որով կը վարուին կեղրոնական ժողովները Փօլսի Թաղական խորհրդոց հետ:

Նմանապէս իրենց վերատեսչութեանն ու համարառութեանը տակ Թեմական խորհուրդներ կը հաստատեն, և ամեն մէկ թեմին տեղական գործոց և հաստատութեանց մատակարառութիւնը իր Թեմական խորհուրդին կը յանձնէ:

Պատասխանատութիւն

7. Իւրաքանչիւր ժողով և խորհուրդ իր մասին մէջ ձեռնհաս է՝ համարատութեան պայմանով։

Գաւառական վարչութեան մէջ՝ Թաղական ու Թեմական խորհուրդները համարատու են Գաւառական ժողովներուն. Գաւառական ժողովները համարատու են գաւառական Ընդհանուր ժողովներուն. Գաւառական վարչութիւնը կեդրոնական վարչութեան համարատու է, և Առաջնորդը Պատրիարքին։

Կեդրոնական վարչութեան մէջ՝ Պօլսի թաղական խորհուրդները համարատու են ազգային Տեսուչ խորհուրդներուն ըստ իւրաքանչիւր մասին. Տեսուչ խորհուրդները համարատու են ազգային Քաղաքական ժողովին՝ բացի Դատաստանական խորհուրդէն, որ համարատու է Խառն ժողովին։

Կրօնական ու Քաղաքական ժողովները և Պատրիարքը Ընդհանուր ժողովին համարատու են։

Ընդհանուր ժողովը բարոյապէս պատասխանատու է Ազգին առջև։

Յարաբերութիւնն

8. Ազգային վարչութեան՝ ազգին հետ, Արարատեան մայր Աթոռին հետ, Բարձրագոյն Դռան հետ ունեցած յարաբերութիւնները սասկզբանց վրայ հիմնեալ պիտի ըլլան։

Աղգին և աղգայնոց հետ՝ միշտ հայրաբար վարութիւն:

Արարատեան մայր Աթոռին հետ՝ աւանդապահ մնալ միշտ նոյն յարաբերութեանց, որոնց մով նախնեացմէ անտի կապուած են իրարու հետ Աղգն ու Աթոռը:

Բ. Դրան հետ՝ թէ Աղգին և թէ աղգայնոց կրօնական ու քաղաքական իրաւունքները պահպանելու համար տէրութեան պաշտպանութիւնը ինչը և, և Աղգին հպատակութիւնը հաւատարիմ պահել առ Տէրութիւնը:

Սոյն յարաբերութեանց միջնորդ Պատրիարքն է:

## 1. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. Աղգային ընդհանուր ժողով

9. Աղգային Ընդհանուր ժողովը կը բաղկանայ 220 աղգային երեսփոխաններէ, որոնցմէ 160-ը Պօլսի թաղերուն եկեղեցեաց կողմէն ընտրեալ, և 60-ը առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ:

Ընդհանուր ժողովին մէջ աղգային երեսփոխանաց անդամակից են.

Նախ՝ աղգային կեդրոնական Վարչութեան անդամներէն՝ Կրօնական ու Քաղաքական ժողովներուն և չորս Տեսուչ խորհուրդներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն ատենապետները:

Այս կարգի անդամոց թիւը իբր 100 է.  
բայց այս թիւը երեսփոխանաց թիւին վրայ  
ճշգիւ չը կրնար աւելցուիլ, վասն զի ասոնց  
մէջ արգէն երեսփոխան ընտրուածներ ալ կրնան  
գտնուիլ:

Երկրորդ՝ Աղքին կամ Տէրութեան ծառա-  
յութեանը մէջ զլխաւոր պաշտօնով մը պա-  
տուեալ անձինք, որոնց արժանաւորութիւնը Աղ-  
քին կամ Տէրութեան կողմէն վկայեալ կը հա-  
մարուի, ինչպէս են Եկեղեցական դասէն՝ Պօլիս  
գտնուող եպիսկոպոսները, Պօլսի Եկեղեցեաց  
քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները,  
ուսումնական դասէն՝ ազգային մատենագիրներ,  
վկայեալ բժիշկներ, զլխաւոր գասատուներ, լրա-  
գրապետներ. քաղաքական դասէն՝ վերին պաշ-  
տօնաւորաց աստիճանակիցներ, արքունի ժողո-  
վոց անդամներ, Բ. Դրան դիւաններուն մէջ  
տնօրէններ և թարգմանապետներ, ազգային կամ  
արքունի հաստատութեանց մէջ տնօրէններ,  
ուսումնապետներ. զինուորական դասէն՝ վերին  
ըսպայից աստիճանակիցներ:

Այս կարգի անդամոց թիւն ալ չը կրնար  
ճշտուիլ վերոյիշեալ պատճառով. բայց իբր ըս-  
կղբունք՝ այս երկու կարգի անդամոց բովան-  
դակ թիւը երբէք չը պիտի հաւասարի երեսփո-  
խանաց թիւին \*):

---

\*). Այս յօդուածը վերաքննէլի է. երբ թէ ազգա-  
յին և թէ տէրութեան պաշտօնաւորաց թիւը այն աս-

10. Բնդիանուր ժողովը էն շատը 400-էն աւելի անդամ՝ չը պիտի ունենայ, և քանի որ երեսփոխանաց մեծագոյն մասը, այսինքն 111-ը գոնէ ներկայ ըլլայ, նիստ չը պիտի կարենայ ընել:

11. Բնդիանուր ժողովին պաշտօնն է՝ Ազգին կողմէն երեսփոխանութեամբ ազգային բարձր պաշտօնաւորները ընտրել, Ազգային ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարառու ըլլալ, և ազգային ծանր կամ ընդիանրական գործերը վճռաբար տնօրինել:

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային Սահմանադրութեան ըսկզբունքները անխախտ պահել և անոնց տրամադրութեանցը համեմատ վարուիլ:

12. Բնդիանուր ժողով կը գումարուի.

Նախ՝ կանոնաւորապէս ամեն տարի մարտ ամսին վերջերը ազգային վարչութեան տարեկան ընդիանուր համարատուութիւնը՝ մտիկ ընելու, ազգային ժողովականաց կեսին ընտրութիւնն ինելու և ազգային տարեկան տուրքին տնօրէնութիւնը հաստատելու համար։ Սոյն տարեկան նիստին մէջ վարչութեան անդամները՝ տուրքի ինդիբէն զատ՝ միւս խնդիրներուն մէջ խօսք միայն ունին և ոչ քուէ։

2. Կաթուղիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար։

---

տիճան աւելնայ, որ անկարելի ըլլայ սոյն համեմատութիւնը պահել։

3. Երուսաղէմայ և Պօլսի Պատրիարքաց ընտրութեանը համար:

4. Կրօնական ու Քաղաքական ժողովոց մէջ կամ Պատրիարքին ու ժողովոց մէջ պատահած անհամաձայնութեանց համար: Առյն պարագայից մէջ ալ Վարչութեան անդամները խօսք միայն ունին և ոչ քուէ:

5. Ազգային Սահմանադրութեան վերաքընդութեանը համար.

Եւ վերջապէս արտաքոյ կարգի պատահած այսպիսի ծանը խնդիրներու համար, զորոնք Ազգային ժողովսերը Ընդհանուր ժողովով որոշել հարկաւոր դատեն:

13. Ընդհանուր ժողով կը հրաւիրեն, նախ Պատրիարքը՝ Ազգին կողմէն, երկրորդ ընդհանուր ժողովին ատենապետը՝ սոյն ժողովին դիւանին կողմէն, երրորդ՝ Կրօնական կամ Քաղաքական ժողովին ատենապետները՝ սոյն ժողովոց կողմէն:

### Բ. Պատրիարք

14. Պատրիարքը Ազգային ժողովոց նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ:

15. Պատրիարքը իրեն եկած ամեն գործ՝ որ ժողովին ձեռնհասութեանը տակ է նէ՝ նոյն ժողովին քննութեանն ու որսշմանը պիտի յանձնէ, և ազգային որոշմանց մէջ իր պաշտօնական գրութիւնքը անվաւեր պիտի համարուին, եթէ

ձեռնհաս ժողովին կողմէն ալ կնքեալ կամ ըստորագրեալ չըլլան. իսկ երբ ստիպողական զործ մը պատահի, որոյ տնօրէնութիւնը չը ներէ ըստասել մինչև ժողովոց գումարման օրը և արտաքոյ կարգի ժողով գումարել կարելի չըլլայ, Պատրիարքը կընայ ինքնին տնօրինել՝ պատասխանատութիւնը իր վրայ առնելով, բայց եղելութիւնը կանոնաւոր կերպով միշտ արձանագրել տալով ձեռնհաս ժողովին պէտք է որ իմացնէ առաջիկայ նիստին մէջ զանի վաւերացնել տալու համար:

16. Պատրիարքը իր բացակայութեան ատեն Ազգային ժողովներու մէջ տրուած որոշում մը չըստորագրած՝ իրաւունք ունի դիտողութիւն ընելու և խնդիրը կրկին քննութեան առնել տալու. իսկ երկրորդ որոշումէն ետքը պարտաւորեալ է ստորագրելու՝ եթէ այն որոշումը Սահմանադրութեան տրամադրութեանցը անհամաձայն չը դանէ:

17. Պատրիարքը իրաւունք ունի Սահմանադրութեան տրամադրութեանցը համեմատ չը վարուող ազգային գործակալ մը, այսինքն՝ եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, վանքի, դպրատան կամ հիւանդանոցի մատակարար մը, իր պաշտօնէն հանելու կամ արգիւթյուն առաջարկութիւն ընել որում որ սնկ է:

18. Պատրիարքը իրաւունք չունի ազգային ժողովները կամ խորհուրդները ինքնին լուծելու.

բայց երբոր տեսնէ թէ սոյն ժողովները Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը մէջ են, առջի անգամին՝ անոնց ատենապետին հետ կը բանակցի բացատրութիւն ուղելու համար, երկրորդին՝ գրով իմաց կուտայ նոյն ժողովին իր ապօրինաւոր ընթացքը և ի կարգ կը հրաւիրէ զանի, իսկ երրորդին՝ Ընդհանուր ժողովը կը կոչչէ եթէ ամբաստանելին Ազգային ժողովներէն մէկն է, կամ Քաղաքական ժողովին կը դիմէ եթէ խորհուրդներէն մէկն է, և պատճառներն իմացնելով ամբաստանեալ ժողովին լուծումը կը պահանջէ:

19. Պատրիարքը ազգային սնտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ և Պատրիարքարանին ներքին մատակարարութեան պահանջած ծախքը իր վրայ ըլլայ:

Գ. Ազգային Կրօնական ժողով

20. Կրօնական ժողովը 14 բանիբուն եկեղեցականներէ կը բաղկանայ:

21. Կրօնական ժողովին պաշտօնն է՝ աղդային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացնել, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ գաւանութիւնն ու աւան-

դութիւնքը անխտիստ և անարատ պահել, եկեղեցեաց և եկեղեցականաց բարեկարգութեանը հըսկել, քահանայից կացութիւնը լաւցնելու և ապագան անդորրելու հոգ տանիլ, արժանաւոր ու բանիբուն եկեղեցականներ հասցնել, և ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննել ու լուծել:

22. Երբ պատահի կրօնական այնպիսի ծանր խնդիր մը, զոր կրօնական ժողովը չը կարենայ լուծել, Բնդհանուը ժողովին բազմական գտվող եկեղեցականաց հետ համագումար ժողով պիտի կազմէ, եթէ այն համագումար ժողովս ալ իր ձեռնհասութեանէն վեր գատէ ըզիսնդիրը, Արարատեան մայր Աթոռին պէտք է դիմէ:

23. Թէ մայրաքաղաքիս և թէ գաւառներու մէջ վարդապետի և քահանայի ձեռնադրութեան հրամանը կրօնական ժողովէն կըտրուի:

24. Քանի որ եկեղեցւոյ մը ժողովուրդը աւելի քահանայի մը հարկաւորութիւնը չըգգայ և Թաղական խորհըրդին միջնորդութեամբը չը խնդրէ, նոյն թաղին եկեղեցւոյն համար քահանայի ձեռնադրութեան հրաման չը պիտի տրուի:

25. Պոլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները կրօնական ժողովը կ'ուրոշէ, և Պատրիարքը կ'անուանէ:

26. Կրօնական ժողովին սրբազան պարտաւորութիւնն է հսկել որ՝ հոգեւոր պաշտօնեաները ձըի կատարուին և հոգեւոր պաշտօնեայք եկեղեցիէն ապրին:

Դ. Ազգային ժաղաքական ժողով

27. Քաղաքական ժողովը 20 քաղաքադէտաշխարհականներէ կը բաղկանայ:

28. Քաղաքական ժողովին պաշտօնն է՝ աղդային քաղաքական գործոց ընդհանուր վերատեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ աղդային խորհուրդներուն կողմէն իրեն մատուցուած աղջօգուտ առաջարկութիւնները ուշի ուշով քննել և կարեւորութիւնը յայտնըվելէն ետքը հաստատել զանոնք և անոնց գործադրութեանը արգելքները՝ եթէ կան՝ բառնալու հոգ տանիլ, և Ազգին բարեկարգութեանն ու յարաջադիմութեանը ըստ ամենայնի փոյթ ունենալ:

29. Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը՝ որ խորհըրդին վերաբերեալ է նէ, նոյն խնդրդին քննութեանը պէտք է յանձնէ, և անոր կարծիքը չառած չը տնօրինէ:

30. Քաղաքական ժողովը կընայ՝ բանաւոր պատճառով մը՝ չընաստատել կամ ետ ձգել խորհրդի մը ըրած որոշումը, բայց՝ անոր ձեռնհասութիւնը յարգելով՝ չը պիտի կարենայ նոյն որոշման ներհակ որոշում և գործադրութիւն ընել:

31. Քաղաքական ժողովը իրաւունք չունի զագգային խորհուրդներէն մէկը լուծելու, քանի որ Սահմանադրութեան տրամադրութեանցը հա-

կառակ ընթացքի մէջ չըտեսնէ զանի. իսկ եթէ պատահի այսպիսի պարագայ մը, առջի անգաւմին՝ անոր ատենապետէն բացարութիւն կուզդէ, երկրորդին՝ գրով իմաց կուտայ խորհրդին և կարգի կընրաւիրէ զանի, իսկ երրորդին կըլուծէ. բայց Ընդհանուր ժողովին տրուելու տարեկան տեղեկագրին մէջ այս լուծման պատճառները պէտք է որ բացարէ:

32. Երբ պատահի քաղաքական այնպիսի ծանր խնդիր մը, զոր Քաղաքական ժողովը իր ձեռնհասութենէն վեր դատէ, Ընդհանուր ժողովին պէտք է որ դիմէ:

### Ե. Ազգային Ռւսումնական խորհուրդ

33. Ռւսումնական խորհուրդը 10 ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ:

34. Ռւսումնական խորհուրդին պաշտօնն է՝ ազգային դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնքն են՝ ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, ազգային դաստիարակութեան ընդհանուր հիմնագիր մը և դպրոցական կանոններ հաստատել, և անոնց համեմատ՝ ազգային վարժարանաց մէջ միօրինակ ընթաց մը որոշել թէ ուսման և թէ ուսուցման, սկզբնական գիտելեաց ուսումը ծաւալել, աղջկանց դաստիարակութեանը յատուկ կերպով հոգտանիլ, սոյն նպատակով հաստատեալ ընկերու-

թեանց խրախոյս տալ և ձեռնոտու ըլլալ, ազգային դաստիարակաց կացութիւնը լաւցնելու և ապագան անդորրելու խնամ՝ տանիլ, ազգին մէջ բանիբուն դասատուներ հասցնելու և դպրոցաց ընտիր դասագիրքներ պատրաստելու փոյթ ունենալ:

35. Ուսումնական խորհուրդը պէտք է իր կողմէն ամենայն ջան 'ի գործ գնէ որ՝ թէ Պօլսի, և թէ գաւառներու մէջ ամեն թաղ ըսկղբնական դաստիարակութեան դպրոցներ ունենան, նոյնպէս Պօլիս և առաջնորդանիստ քաղաքները մէյ մէկ ազգային ուսումնարան ունենան դասական ուսումնաց համար: Այս ուսումնարանէն վկայականով կ'ելնեն աշկերտները, և մասնաւոր ուսմունք ընդուներուն՝ դասատուութեան վկայագիր ալ կըտրուի:

36. Ուսումնական խորհուրդը կ'որոշէ ազգային վարժարանաց մէջ ընդունուելու դասագիրքներն ու դասատուները. իսկ քրիստոնէական վարդապետութեան դասագիրքն ու դասատուն կրօնական ժողովէն պէտք է որ խնդրէ:

37. Ուսումնական խորհուրդը կընախագահէ ազգային վարժարանաց տարեկան քննութեանը. իսկ քրիստոնէական վարդապետութեան մասին քննութիւնը կրօնական ժողովին ձեռօքը կ'ըլլայ:

Զ.Ազգային Տնտեսական խորհուրդ

38. Տնտեսական խորհուրդը 10 տնտեսագէտ աշխարհականներէ կըբաղկանայ:

39. Տնտեսական խորհըրդին պաշտօնն է՝ ազգային հաստատութեանց և կալուածոց մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ սոյն հաստատութեանց պայծառութեանն ու բարեկարգութեանը հոգ տանիլ:

40. Տնտեսական խորհուրդը վանօրէից և հիւանդանոցի համար մասնաւոր հոգաբարձութիւններ կը հաստատէ և անոնց միջնորդութեամբը կը մատակարարէ զայս հաստատութիւնները:

41. Վանօրէից հոգաբարձութիւնը եօթ հոգիէ կը բաղկանայ, որոնց երեքը եկեղեցական և չորսը աշխարհական:

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ զայս հոգաբարձունները և Քաղաքական ժողովին հաւանութեամբը Պատրիարքը կ'անուանէ:

42. Վանօրէից հոգաբարձութեան նպաստակը պիտի ըլլայ սոյն հաստատութեանց եկամուտներն ու հասոյթները ազգին օգտին ծառայեցնել. Կախ՝ վանօրէից մէջ ուսումնարան հաստատելով՝ Կրօնական ժողովին և Ուսումնական խորհըրդին առւած հիմնադրին համաձայն, և որի մէջ որ պէտք կայ՝ հիւանդանոց, տպարան, թանդարան:

43. Վանօրէից հոգաբարձութիւնը իւրաքանչիւր վանքի համար երկերկու գործակալ պէտք է ունենայ տեղացի, որոնք վանահօր նա-

խազահութեամբը կը մատակարարեն դվանքը  
Գաւառական ժողովէն անկախ կերպով:

44. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը եօթ  
հոգիէ կը բազկանայ, որոնց երկուքը բժիշկ:

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ այս Հոգաբարձու ները և Քաղաքական ժողովին հաստատութեամբը Պատրիարքը կ'անու անէ:

45. Հիւանդանոցի հոգաբարձութեան նպատակը պիտի ըլլայ սոյն հաստատութիւնը իր նպատակին ծառայեցնել, հոն անօրինելով նախկանոնաւոր Հիւանդանոց մը աղքատ հիւանդաց համար. երկրորդ՝ Պատսպարան մը ծեր ու անկար աղքատաց համար. երրորդ՝ Զգաստարան մը անառակաց համար. չորրորդ՝ Կրթարան մը որբ ու անտէրունչ տղայոց համար:

Այս օթեվաններուն իւրաքանչիւրը թէ շենքի և թէ կարգի կողմէն բժշկական կանոնաց և ողջպահիկ օրինաց համաձայն պէտք է կարգադրեալ ըլլայ:

46. Կտակաց անօրէնութիւնը Տնտեսական խորհըդին կը վերաբերի: Այս խորհուրդը պէտք է հսկէ որ ամէն կտակ օրինաւոր կերպով վաւերացեալ ըլլայ, կտակողին դիտաւորութիւնը անխախտ պահուի և գործադրութիւնը ապահով ըլլայ:

Սոյն տրամադրութեանց համեմատ՝ կտակի վերաբերեալ յատուկ կանոններ ու մասնաւոր Հոգաբարձութիւն պէտք է հաստատէ Տնտեսական խորհուրդը:

Երբ կտակին գործադրութիւնը կտակողին դիտաւորութեանը համամատ չըլլայ, ընտանիքը իրաւունք ունի բողոքելու:

47. Թէ Պօլսի և թէ գաւառներու մէջ գըտված ազգային անշարժ ըստացուածոց կալուածագիրներուն (Սէնէտ, Հէօմէթ, Ֆէրազ) օրինակները Տնտեսական խորհրդին ձեռքով ժողովուելով ազգային դիւանատան մէջ պիտի պահուին ամենայն ապահովութեամբ:

48. Տնտեսական խորհուրդը պէտք է հակէ որ ամեն ազգային ըստացուած օրինաւոր կալուածագիր ունենայ:

49. Ազգային որ և է կալուածի դնումն ու վաճառումը չըկրնար գործադրուիլ առանց Տընտեսական խորհրդին դիտութեանը, Քաղաքական ժողովին • հաճութեանն ու Պատրիարքին կնքադրութեանը:

Սոյն տրամադրութեանց ուժով միւլթելլութիւն ըսուած բանը վերցած է:

50. Պօլսի մէջ և շըջականները ազգային որ և է շինութիւն կամ նորոգութիւն չըկրնար ըսկսիլ առանց Տնտեսական և Ելմտական խորհրդոց դիտութեանն ու Քաղաքական ժողովին հաճութեանը:

Նմանապէս ազգային որ և է հաստատութեան համար ստակ չըկրնար ժողովուիլ առանց վերոյիշեալ պայմանին:

Է. Ազգային Ելմտական խորհուրդ

51. Ելմտական խորհուրդը 10 հաշուագէտ աշխարհականներէ կը բաղկանայ:

52. Ելմտական խորհուրդին պաշտօնն է՝ ազգային հասութից և ծախուց ընդհանուր տեսչութիւնը և ազգային սնտուկին համարակալութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային հաստատութեանց մատակարարութեան հաշիւները կանոնաւորապէս առնել, ծախուց օրինաւորութիւն ըստուգել, ազգային եկամուտներն աւելացնելու ջանք ընել՝ այն աստիճան որ օր մը ազգային սընտուկին մուտն ու ելքը իրարու հաւասար գալով ընդհանուր տուրքը մեծապէս թեթեւանայ:

53. Ազգային սնտուկին մուտքն են գլխաւորապէս՝ տարեկան ընդհանուր տուրք, կալուածական հասոյթ, դիւանական հասոյթ, կտակ, նուէր և այլն, ելք են գլխաւորապէս՝ պարբիւրքարանի և գիւանատան ծախք, Հիւանդանոցի ծախք, կարօտեալ թաղերու եկեղեցեացն ու վարժարանացը նպաստ և այլ պատահական ծախքեր:

54. Ազգային սնտուկին հաշիւը տօմարակալութեան կանոնով պիտի բռնուի:

55. Ելմտական խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ յետազայ տարոյն մէջ ըլլալու հասոյթն ու ծախքը կըշոելով՝ հաշուեցուցակը Քաղաքական ժողովին պիտի ներկայացնէ:

Ը. Ազգային Դատաստանական խորհուրդ

56. Դատաստանական խորհուրդը 10 իրաւասէր անձերէ կը բաղկանայ, որոնց հինգը եկեղեցական և հինգը աշխարհական:

57. Դատաստանական խորհրդին պաշտօննէ ազգային դատաստանական գործոց ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ հակառակորդները արգարութեամբ իրաւախոն ընելու ջանալ և իր վճիռներուն հիմ բըռնել կրօնական մասին՝ նախնեացմէ՝ աւանդեալ կանոնները, և քաղաքական մասին՝ Տէրութեան դատարանաց արդի կանոնները:

58. Երբ պատահի այնպիսի խնդիր մը զոր Դատաստանական խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ազգային ժողովներէն որու որ անկ է անոր կըզբէ:

59. Դատաստանական խորհուրդին մէջ դատեալ անձ մը միշտ իրաւունք ունի կրօնական կամ Քաղաքական ժողովին բողոքելու կամ Խառն ժողով պահանջելու ըստ գործին:

Թ. Թաղական խորհուրդներ

60. Թաղական խորհուրդները կըբաղկանան ըստ տեղւոյն 5-էն մինչեւ 9 անդամներէ:

61. Թաղական խորհրդին պաշտօնն է՝ թղին տեղական գործոց մատակարարութեանը,

եկեղեցւոյն եկեղեցպանութիւնը, դպրատան հոգաբարձութիւնը, աղքատաց խնամակալութիւնը ազգայնոց մէջ պատահած վէճերսւն քննութիւնը ու խաղաղաբարութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ թաղին եկեղեցւոյն պայծառութեանը խնամ տանիլ, թաղին մէջ թէ աղջկանց և թէ տղայոց համար ըսկզբնական դաստիարակութեան բարեկարգ դպրատուններ ունենալու ջանք ընել, և թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնառու ըլլալ:

62. Թաղերուն մէջ թէ եկեղեցւոյ և թէ դպրատան որ և է կալուած թաղական խորհուրդին անմիջական անօրէնութեանը տակ է. այսպիսի կալուածոց գնումն ու վաճառումը ըստ 49 Յօդ. կըդործադրուի:

63. Ամեն թաղ մէյմէկ անտուկ պիտի ունենայ թաղական խորհրդին հսկողութեանը տակ:

Այս սնտուկին մուտքն են՝ թաղական տուրքը, եկեղեցւոյ և դպրատան կալուածոց եկամուտները, եկեղեցւոյն հասոյթները, աղքատաց համար եղած նուէրներն ու կտակները և այն. ելքն են՝ թաղին եկեղեցւոյն և դպրատանց ծախքերն ու աղքատաց օգնութիւնները:

64. Ամեն թաղական խորհուրդի իր թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւննը պէտք է որ ունենայ կանոնաւոր կերպով:

65. Թաղական խորհուրդները իրենց պաշ-

տօններուն մէջ Տեսուչ խորհուրդներուն հետ  
ուղղակի յարաբերութիւն ունին. եկեղեցալանու-  
թեան գործերու համար՝ Տնտեսական խորհըրդին  
հետ, դպրատանց ուսումնական մասին համար՝  
Ուսումնական խորհըրդին հետ, դրամական գոր-  
ծերու համար՝ Ելմտական խորհըրդին հետ, դա-  
տական գործերու համար՝ Դատաստանական  
խորհըրդին հետ:

Թաղական խորհուրդը երբ չը կրբնայ հակա-  
ռակորդերը իրաւախոհ ընել, գործը Դատաստա-  
նական խորհըրդին պէտք է դրկէ իր քննութեան  
տեղեկագրովը:

Փ. Ազգային դիւանատուն

66. Պատրիարքարանին մէջ դիւանատուն  
մը պիտի հաստատուի որոյ գործը պիտի ըլլայ  
ազգային պաշտօնական գրութեանց տընօրէ-  
նութիւնը:

97. Դիւանատունը երեք դրասենեակի պի-  
տի բաժնուի:

Ա. Թղթակցութիւն, որ Պատրիարքարանէն  
զըրկուելու գիրերուն և ի Պատրիարքարան հա-  
սած թուղթերուն կարգաւորութեանը կ'զբաղի:

Բ. Արձանագրութիւն, որ ազգային ժողո-  
վոց և խորհրդոց վերաբերեալ թուղթերուն կար-  
գաւորութեանը կ'զբաղի:

Գ. Ազգահամար, որ ազգայնոց քաղաքային  
վիճակագրութեանը՝ այսինքն ծննդեան, ամսւա-

նութեան և վախճանման վերաբերեալ արձանաւ-  
գրութեանց կարգադրութեանը կղբաղի: Առյն  
գրասենեակէն կը արուին ազգայնոց թէ՛ ճամ-  
բորգութեան համար և թէ՛ առեւտրական գոր-  
ծողութեանց համար պէտք եղած վաւերական  
թուղթերը, նաեւ ծննդեան, ամուսնութեան և  
վախճանման վկայականները:

68. Թղթակցութեանց գրասենեակը՝ ներ-  
քին և արտաքին թղթակցութեանց և Թուրքերէն  
գրութեանց համար պէտք եղածին չափ դիւանա-  
դպիրներ պիտի ունենայ: Այս գրասենեակը Պատ-  
րիարքին հրամանին ներքեւ է և ինք կանուանէ  
ասոր անդամները Քաղաքական ժողովին հաւա-  
նութեամբը:

Արձանագրութեան գրասենեակը վեց դիւա-  
նադպիր պիտի ունենայ: Երկուքը կրօնական ու  
Քաղաքական ժողովներուն գործոցը յատկացեալ,  
և չորսը՝ չորս Տեսուչ խորհուրդներուն գործոցը  
կարգեալ:

Այս գրասենեակին անդամները ամեն մէկը  
իր վերքերական ժողովին կամ խորհուրդին հրա-  
մանին ներքեւ է, զորոնք նոյն ժողովները կամ  
խորհուրդները կընտրեն և Պատրիարքը կանուա-  
նէ Քաղաքական ժողովին հաւանութեամբը:

Ազգահամարի գրասենեակը պիտի ունենայ  
նօտար մը, զոր Քաղաքական ժողովը կընտրէ և  
Պատրիարքը կանուանէ:

Այս գրասենեակներուն անդամներուն թիւը

ըստ հարկին կաւելնայ կամ կրպակսի:

69. Դիւանատունը պիտի ունենայ դիւանատետ մը, որ Դիւանատան բոլոր գործոցը տնօրէն և պատասխանատու է, զոր Քաղաքական ժողովը կընտրէ և Պատրիարքը կանուանէ:

Դիւանապետը կընէ Ընդհանուր ժողովին դիւանադպրութիւնը:

70. Դիւանապետը սլարաւառքեալ է տարին անգամ մը Պօլսի ամեն մէկ թաղէն և հինգ տարի անգամ մը ամեն մէկ գաւառէն իրենց ազգահամարին, այսինքն՝ ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց տօմարներուն օրինակները պահանջել և ազգային Դիւանատան ընդհանուր ազգահամարին մէջ արձանագրել տալ:

71. Դիւանապետը ազգային լեզուն քաջ գիտցող և Տաճկերէնի ու Ֆոանսերէնի բաւական հմտութիւն ունեցող անձ մը պէտք է որ ըլլայ: Նմանապէս դիւանադպիրները ազգային լեզուն քաջ գիտցող և իրենց մասին մէջ հմուտ անձինք պէտք է որ ըլլան:

72. Դիւանադպիրները մասնաւորապէս պատասխանատու են իրենց վերքերական ժողովին կամ խորհուրդին առջեւ և ընդհանրապէս Դիւանապետին առջեւ:

73. Ազգահամարի դրասենեակէն արուած որ և է թուղթ և վկայական՝ պատրիարքական կնքով և դիւանապետին ըստորագրութեամբ վաւերացեալ պէտք է ըլլան:

74. Ազգային դիւանատունը ամեն օր ութիւն բամ բաց և դիւանադալիքները ներկայ պիտի գտվին բաց ի տօնելի օրերէն։ Եթէ տօնելի օր մը ժողով կամ խորհուրդ ըլլալ պատահի, նոյն ժողովին կամ խորհուրդին դիւանապետը նոյն օրը ներկայ պէտք է գտուի։

## 2. ԳԱԼԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. Գաւառական Ընդհանուր ժողով

75. Գաւառներու մէջ Ընդհանուր ժողով կը կազմուի թագական և թեմական երեսփոխան-ներէ, որոց անդամակից են նախ՝ գաւառին կրօնական և Քաղաքական ժողովներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն ատենապետները, երկրորդ՝ Ազգին կամ տեղական իշխանութեան ծառայութեանցը մէջ զլիսաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք. (տես Յօդ. 9):

76. Գաւառական Ընդհանուր ժողովներուն պաշտօնն է՝ իւրաքանչիւրը իր գաւառին կողմէն երեսփոխանութեամբ գաւառին առաջնորդը ընտրել. Կրօնական ու Քաղաքական ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարառու ըլլալ, և գաւառական ծանր կամ ընդհանրական գործերը անօրինել:

Բ. Առաջնորդ

77. Առաջնորդը Գաւառական ժողովներուն

նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կըվարէ:

Իր պարտաւորութիւնն է՝ գաւառին մէջ ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել:

78. Առաջնորդը չըպիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով իր պաշտօնին գլխէն հեռանալ, այլ գաւառին գլխաւորքադին մէջ ազգային Առաջնորդարանը պիտի բնակի, ուր կըգումարուին և Գաւառական ժողովները:

79. Առաջնորդը գաւառական սնտուկէն իւրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ և Առաջնորդարանին ներքին մատակարարութեան ծախքը իր վրայ ըլլայ:

Գ. Գաւառական ժողովի եւ խորհուրդի

80. Գաւառաց կրօնական ու Քաղաքական ժողովները՝ ըստ տեղոյն 7-էն մինչեւ 12 անդամներէ կըբաղկանան:

81. Գաւառաց թաղական և թեմական խորհուրդները ըստ տեղոյն 5-էն մինչեւ 9 անդամներէ կը բաղկանան:

82. Ամեն գաւառ իր Քաղաքական ժողովին հսկողութեանը ներքեւ մէյմէկ գաւառական որնտուկ պիտի ունենայ գաւառին ազգային եկամտից և ծախուց անտեսութեանն ու համարա-

կալութեանը համար. նմանապէս ամեն թաղ և  
թեմ՝ իր սնտուկը պիտի ունենայ:

Այս սնտուկներուն համարակալութիւնը կա-  
նոնաւոր կերպով պիտի կատարուի:

83. Գաւառներու մէջ ամեն Առաջնորդա-  
րան իր գաւառական դիւանատունը պիտի ու-  
նենայ. նմանապէս ամեն թաղ և թեմ:

Գաւառական դիւանները պարտաւոր են  
գաւառին թաղական և թեմական ազգահամար-  
ները ժողովել և անոնցմով գաւառական ընդհա-  
նուր ազգահամար կազմել:

### Գլուխ Բ.

## ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔ

84. Ամեն ազգային անհատ՝ որ չափահաս  
է և վաստակի տէր, պարտաւոր է ազգային պի-  
տոյից պահանջած ծախքերուն մասնակից ըլլար,  
բաց անոնցմէ որոնց կարողութիւն չունենալը  
իրենց թաղին կամ իրենց արհեստակցաց կող-  
մէն վկայեալ է:

85. Ազգային տուրքը տարեկան է և բաշխ-  
ման հիմ պիտի բանուի իւրաքանչիւրին կարո-  
ղութիւնը:

86. Երկու կերպ է ազգային տուրքը. մէկը  
ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ  
է և կը հաւքուի Կեդրոնական վարչութեան կող-

մէն ազգային սնտուկին համար, և միւսը մասնաւոր՝ որ մասնաւոր ծախուց յատկացեալ է և կը հաւքուի թաղական խորհըրդոց կողմէն թագական սնտուկին համար:

87. Պօլսի մէջ ընդհանուր տուրքին բաշխաման ու հաւաքման եղանակը թաղաքական ժողովին մէջ կ'որոշուի և Ընդհանուր ժողովով կը հաստատուի: Իսկ թաղական տուրքը ամեն թաղիր խորհուրդին մէջ կ'որոշէ ու կըհաստատէ:

Սոյնպէս կը անօրինուին և գաւառներուն մէջ գաւառական ընդհանուր տուրքն ու թաղական մասնաւոր տուրքը:

88. Գաւառները մասնակից պիտի ըլլան ազգային ընդհանուր տուրքին:

Գաւառներուն կողմէն ազգային կեդրոնական սնտուկին տըրուելու մինչև ցարդ սովորութիւն եղած տարեկան տուրքին փոխարէն՝ գաւառական սընտուկը իր հաւաքած գաւառական ընդհանուր տուրքին հարիւրին այսքան պիտի տայ ազգային կեդրոնական սնտուկին:

Հարիւրին որքան տըրուելլը Պօլսին թաղաքական ժողովը պիտի որոշէ:

Գլուխ Գ.

Ընօթիքի հիմք

## Ա. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ

### 1. Ըստողութեան պայմաններ

89. Ընտրելու իրաւունքը լման 25 տարւոյ հասակէն կ'ըսկսի:

90. Ընտրելու իրաւունքէն զրկեալ կամ արդիկեալ են դատաստանապէս.

Նախ՝ քրէական յանցանօք դատապարտեալ և հրապարակաւ նշաւակեալ անձինք, որոնք մեռետու են քաղաքականապէս ըստ օրինաց աէրութեան:

2. Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենդութեամբ բռնուած և ազգային ատեանի մը կողմէն դատապարտութիւն կրած անձինք, որոնց համար դատող ատեանը ազգային գործոց մէջ չը գործածուիլը վճռած ըլլայ:

3. Տէրութեան կողմէն զգաստացուցիչ պատիժ կրած կամ ազգային զգաստարանէն ելած անձինք, որոնց ազգային ատեան մը արգիլած ըլլայ ընարելու իրաւունքը: Այս արգելը կըվերանայ երբոր այսպիսեաց կատարելապէս զգաստացեալ ըլլալը արգիլող ատեանին կողմէն վկայուի:

4. Խելագարութեան պատճառով անբաւա-

կան դատեալ անձինք, որոնց կատարելապէս առողջացեալ ըլլալը վաւերական կերպով վկայեալ չըլլայ:

5. Հարկ եղած ազգային տուրքը կարողութիւն ունենալով մերժող անձինք, որնք ազգովին եպերելի են իբր ազգային պարտեաց զանցառու։ Այս արգելքը կը վերնայ երբ այսպիսիք ազգային այս անհրաժեշտ պարտականութիւնը ճանչել ըսկսին։

## 2. Բնիտելութեան պայման

91. Ազգային գործոց տնօրէնութեանը մէջ որոշողական ձայն ունենալու իրաւունքը լման 30 տարւոյ հասակէն կըսկսի։

Ամենայն անհատ ազգային որ եռառւն տարին լրացուած է և չէ դատաստանապէս զըրկեալ կամ արգիլեալ ազգային իրաւանց վայելումէն, ընտրելի է ազգային որ և է պաշտօնի համար։

## Բ. ԲՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՅ

92. Բնտրութեան հիմ պիտի բռնուի բնակչաց թիւը։

Պոլսի ամեն մէկ թաղին և ամեն մէկ գաւառին ընկած երեսփոխաններուն բաշխման ցուցակը յատուկ պատկերով պիտի նշանակուի։

Երեսփոխանաց բաշխման ցուցակը՝ ամեն

հինգ տարին անդամ մը կը նորոգուի, ազգային թիւանսատան ընդհանուր ազգահամարին համաձայն:

Այս վերանորոգումը Վարչութեան գլխաւոր անդամոց, այսինքն Կրօնական ու Թաղաքական ժողովոց ատենապետներուն և Տեսուչ ու Մատակարար խորհրդոց ատենապետներուն մէկ տեղ գալովը ձեւացած Համախորհուրդ ժողովին մէջ կըլլայ:

93. Թէ Պօլսի թաղերէն և թէ գաւառներէն ուղուած երեսփոխանները հարկ չէ որ ընտրող թաղին կամ գաւառին ընակիչներէն ըլլան, բաւական է որ Պօլսի մէջ ընակին, և ազգափրութեան ու պատուաւորութեան մասին ընտրողաց համարումը ըստացած անձինք ըլլան:

Այս երեսփոխանները չէ թէ զիրենք ընտրող թաղին կամ գաւառին երեսփոխանները կը սեպուին Ընդհանուր ժողովին մէջ, այլ Ազգին երեսփոխաններն են համազօր իշխանութեամբ:

### Ընտրողական ժողովներ

94. Ընդհանուր ժողովին լուծուելու օրէն երկու ամիս առաջ գաւառներուն՝ և մէկ ամիս առաջ Պօլսի թաղերուն կը ծանուցանէ Պատրիարքը ամեն մէկ թաղէն կամ գաւառէն ուղուած երեսփոխանաց թիւը և կը հրաւիրէ ընտրողական ժողով գումարել, յիշելով ընտրելութեան պայմաններն ու ընտրութեան կանոնները:

Սոյն կոնդակին օրինակը թաղական խորհրդարանին մէջ բացադրեալ կը մնայ մինչև ընտրութեանց աւարտումը:

95. Ամեն թաղի մէջ ընտրողական ժողովները կը կազմուի թաղին բնակիչներէն՝ երեսփոխանաց հետ անդամակից ըլլալու արժանաւորութիւննին արդէն վկայեալ (տես Յօդ. 9) և ընտրողութեան պայմաններն ունեցող անձանցմէ:

Ընտրողական ժողովը 21 հոգիէ կը բաղկանայ. եթէ թաղի մը մէջ վերոյիշեալ անձինքը այս թիւը չը լցնեն, պակասը նոյն թաղին մէջ էն շատ տուրք տուող ընտրողացմէ պէտք է լցնել:

Ընտրողական ժողովին նախադահ՝ եկեղեցւոյն քարողիցը կամ անոր բացակայութեանը՝ աւագերէցն է. իր դիւնը կը բաղկանայ մէկ ատենապետէ, մէկ ատենադպրէ և երեք քըննիչներէ:

Ընտրողական ժողովը Թաղական խորհուրդին հետ միանալով կը նախադահէ ընտրական գործողութեանց:

96. Ընտրողական ժողովը ընտրելեաց ցանկ մը կը պատրաստէ ուզուած երեսփոխաններութիւէն եռապատճիկ աւելի՝ ընտրողաց որոշումը դիւրացնելու համար:

Սոյն ցանկն ալ բացադրեալ կը մնայ թաղական խորհրդարանին մէջ, իսկ ընտրողք ոչ մէկ կերպով ըստիպեալ են այս ցանկին հետևելու:

97. Ընտրողական ժողովները ամէն մէկը իր թաղին մէջ՝ ընտրողութեան պայմանները ըստուգելով՝ ընտրողաց ցանկ մը պիտի պատրաստեն այբուբենի կարգով. այս ցանկը ութը օրքաց պիտի մնայ թաղական խորհրդարանին մէջ, որպէս զի թաղին ընարողները կարենան իրենց անուանը վրայ դիտողութիւն ունին նէ՝ ընել:

98. Ընտրողական ժողովը ամէն մէկ ընտրողի մէյմէկ ընտրողազիր պէտք է տայ սոյն օրինակ.

Ա... ընտրող

Ա... (անոն թաղին)

և ընտրողական ժողովին կողմէն ըստորագրեալ:

Առանց այս ընարողազիրը ներկայացնելու ոչ ոք պիտի կարենայ քըլէտուփին մերձենալ:

99. Եթէ ընտրութեան հրաւէրը՝ որ և է պատճառով՝ Պատրիարքին կողմէն չըլլայ (տես Յօդ. 94) ազգային Վարչութեան կողմէն պէտք է որ ըլլայ քաղաքական ժողովին ատենապետին ձեռօք:

Եթէ ազգային Վարչութիւնն ալ զանցառութիւն ընէ իր այս պարտականութիւնը կատարելու, և ընտրութեան համար Սահմանադրութեան որոշած ժամանակը հասած ըլլայ, այն ատեն ընտրողները իրաւունքնին վարելով՝ լիակատար իշխանութեամբ կը ժողովուին իրենց թաղին կամ թեմին եկեղեցւոյն խորհրդարանը և ընտրողական ժողով կազմելով կը նաև իրենց

Երեսփոխաները ըստ ընտրական կանոնաց:

Երբոր այս կերպով երեսփոխանաց մեծագոյն մասին ընտրութիւնը լմննայ, անմիջապէս լուծեալ է ըստ օրինի հին ընդհանուր ժողովը և զուրկ ամենայն իշխանութենէ, ուստի և ինչ որ գործէ կամ գործածէ նոյն կէտէն ասդին, ապօքինաւոր է և ապագօր իբրև չեղեալ:

### Քուեարկութիւն

100. Ընտրողաց ցանկին բացուելէն շաբաթմը ետքը՝ կիրակի առաւօտ ժամերգութեան աւարտումէն ետեւ՝ թաղական խորհրդարանին մէջ քուէարկութեան կըսկսուի սապէս:

Ընտրողական ժողովին նախագահը ընտրողաց ցանկը ձեռքը առած կարգով կը կոչէ ընտրողները որոնք ընտրողագիրնին կը դնեն սեղանին վրայ և ընտրողաց ցանկին մէջ իրենց անուանը առջև ստորագրելէն ետքը՝ հոն թուղթի մը վրայ քանի երեսփոխան ուզուած է նէ՝ այն քան անձի անուն կը գրեն իրենց ձեռքովը վերէն ի վար կարգով և ամեն մէկ անուան առջև մականուն, ընտակութիւն, արհեստ նշանակելով թուղթը կը ծալեն քուէտուփին մէջ կը ձգեն:

101. Քուէարկութիւնը գաղտնի է. ուստի պէտք է որ քուէարկուք առանձին կերպով մը գրեն իրենց քուէաթուղթը, որպէսզի ուրիշ մը չը կարենայ տեսնել գրուած անունները:

102. Քուէարկութիւնը սկսած օրը պէտք է լմննայ:

Ընտրողացմէն ով որ այն օրը քուէարկութեան չներկայանայ՝ իրաւունք չունի ետքը բռնգութելու:

103. Ոչ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի կամ գաւառի մէջ քուէ տալ:

104. Միացեալ թաղերն ու թեմերը՝ եթէ իրարումօտ ըլլան, մէկտեղ գալով կընեն քուէարկութիւնը, իսկ եթէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւրը զատ զատ քուէարկութիւն կընեն ու ետքը քուէարկութեանց արդիւքը կը միացնեն:

### Քուէնամար

105. Քուէարկութիւնը լմըննալէն ետքը՝ նոյն օրը միենոյն նիստի մէջ ընտրողական ժողովին հսկողութեանը ներքե տուփը կը բացուի. քննիչները քուէները կը համրեն և քուէարկուաց թիւին հետ կը բաղդատեն. եթէ տարբերութիւն գտուի կամ եղած տարբերութիւնը աննշան ըլլայ, այնսինքն՝ մէկ կամ երկու թիւի (վասնզի կընայ պատահիլ, որ քուէարկուացմէ մէկ կամ երկուքը մոռցած ըլլան ընտրողաց ցանկին մէջ ըստորագրելու), քուէարկութիւնը վաւերական կը համարուի. իսկ եթէ երկուքէն աւելի ըլլայ տարբերութիւնը և ընտրողական ժողովը խարդախութեան կասկած ունենայ, դարձեալ քուէար-

կութիւն ընել կորոշէ միւս օր մը մինչև առաջիկայ կիւրակէն:

Նմանապէս եթէ ուզուած երեսփոխանաց թիւը չը լըցուի առաջին անգամին՝ մնացածին համար երկրորդ անգամ ընտրութիւն կըլլայ ուրիշ օր մը:

106. Եթէ պատահի որ մէկը պէտք եղածէն աւելի թուով անուն գրած ըլլայ իր քուէաթուղթին մէջ, նոյն թիւէն ետքը եկած անունները անընդունելի են:

Նմանապէս վերէն ի վար կարգով չգրուած անուններուն քուէաթուղթը անհամարելի է:

107. Քուէարկուաց թիւին կէսէն աւելի քուէ ըստացողներուն մէջ էն շատ ըստացող անձինքը երեսփոխան ընտրուած են:

108. Եթէ մէկ կամ երկու անգամով առաւելութիւն չստացուի, ընտրողական ժողովը կը ծանուցանէ էն շատ առաւելութիւն ըստացող երկու անունները, և երբորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկու անուանց վրայ կըլլայ:

109. Եթէ հաւասար քուէ պատահի երկու անձանց վրայ, երիցագոյնը ընտրեալ է:

Վաւերացում լնտրուքեանց

110. Ամեն ընտրողական ժողովը իր թաղէն կամ գաւառուէն ընտրուած երեսփոխանաց անունները Քաղաքական ժողովին կը ներկայացնէ Պատրիարքին ուղղեալ տեղեկագրով մը, որոյ

մէջ պէտք է ճշտիւ նշանակուած ըլլայ քուէաթուղթին օրինակը, այսինքն՝ ընտրեալին անունը, մականունը, բնակութիւնն ու արհեստը և քուէարկութեան բոլոր պարագաները:

Քաղաքական ժողովը՝ Քուէարկութեանց տեղեկագիրները քննելով, կ'ըստուգէ երեսփոխանաց իշխանութիւնը:

Այս ըստուգութենէն ետքը Պատրիարքը պաշտօնական կերպով իմաց կուտայ նորընտիր երեսփոխանաց և կը հրաւիրէ զանոնք ընդհանուր ժողով գումարել որոշեալ օր մը:

111. Ընդհանուր ժողովը իր առաջին նիստին մէջ Քաղաքական ժողովին քննած տեղեկագիրները մտիկ ընելով՝ ընտրութեանց ըստուգութիւնը կը վաւերացնէ և երեսփոխանաց իշխանութիւնը հաստատելով իր կազմութիւնը կը լրացնէ:

112. Ընդհանուր ժողով կընայ գումարուիլ երբ երեսփոխանաց մեծագոյն մասը՝ որ Պօլսի մէջ է՝ ընտրուած ըլլայ, առանց սպասելու ընտրութեանց վերջը կամ գաւառական երեսփոխանաց որոնց ընտղութեան լուրը մէկ կողմէն Պօլսի համնելու վրայ կ'ըլլայ:

113. Եթէ մէկը քանի մը թաղերուկամ քանի մը գաւառներու կողմէն ընտրուած ըլլայ, ինքը կ'որոշէ որ թաղին կամ որ գաւառին երեսփոխանութիւնն ընդունելը: Եթէ ինքը չ'ուզէ որոշել, Ընդհանուր ժողովը վիճակով կ'որոշէ

Սոյն պարագային մէջ ընտրող թաղին կամ գաւառին իմաց կը տրուի ուրիշ երեսփոխան մ'ընտրել:

Սոյնպէս կ'լայ երբ վախճանման կամ հրաժարման պատճառով երեսփոխանաց մէջէն պակառող ըլլայ:

114. Ժողովարանին մէջ բացադրեալ պէտք է մնայ երեսփոխանաց ցանկը այբուբենի կարգով շինուած, որոյ մէջ թուականովը կը նշանակուի անուան առջև՝ հրաժարում, վախճանում, ևայլն: Նմանապէս երեսփոխանաց հետ առաջին և երկրորդ կարգէ անդամակից (Յօդ.9) եղող անձանց ցանկը: Այս ցանկերը հինգ տարին անդամ մը կընորոգուին Ընդհանուր ժողովին նորոգմանը հետ:

Հստ հարկին գործածելու համար երեսփոխանաց մէյմէկ տպեալ արտօնագիր երեսփոխանութեան պէտք է տրուի սոյն օրինակ.

Ա . . . Ազգային երեսփոխան

(Ամ՞ Քըիստոսի)

• • • • •

(Ստորագրութիւն երեսփոխանին)

Եւ ճակատը պատրիարքական կնքով կնքեալ:

Դ. Ընտրութիւն պատրիարքի

115. Պատրիարքը պէտք է որ էջմիածնայ  
կաթուղիկոսէն ձեռնադրեալ կամ անկէ իբր էջ-  
միածնայ եպիսկոպոս ընդունեալ անձ մ'ըլլայ  
և Օսմանեան Տէրութեան հպատակ:

116. Կրօնական ու Քաղաքական ժողովները  
խառն ժողով կազմելով ընտրելութեան պայման-  
ներն ուսնեցող եպիսկոպոսաց և վարդապետաց  
արժանիքը կը քննեն թէ կրօնական և թէ քա-  
ղաքական մասին և կ'որոշեն երեք ընտրելի ո-  
րոնց անունները Ընդհանուր ժողովին կը ներ-  
կայացնեն:

Ընդհանուր ժողովին մէջ այն երեք ընտրե-  
լի անձանց վրայ գաղտնի քուէարկութիւն ըլլա-  
լով՝ ով որ մեծագոյն մասին հաւանութիւնը  
ըստանայ, անի՛ կ'լլայ օրինաւոր Պատրիարք  
Ազգին:

Եթէ առաջին անգամին մեծագոյն մաս չը  
վաստկուի, երկրորդ անգամ քուէարկութիւն  
կ'ըլլայ. Եթէ երկրորդին ալ չըյաջողի, երկու  
առաւելագոյն քուէ ըստացողաց անունները կը  
ծանուցուի դիւանին կողմէն և երրորդ քուէար-  
կութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ  
կ'լլայ:

Եթէ պատահի որ քուէնները երկու անձի  
վրայ հաւասարապէս բաժնուին, այն ատեն  
երկուքին մէկը վիճակով կ'ընտրուի:

Եթէ ընտրեալը վարդապետ ըլլայ, անմիջապէս կջմիածին կը զըրկուի եպիսկոպոս ձեռնադըրուելու համար:

117. Ընտրութիւնը լըմըննալէն ետքը տեղեկագիր մը կըշինուի, զոր բոլոր բազմականք կ'ըստորագրեն, և որոյ օրինակը՝ Ընդհանուր ժողովին կնքովը կնքեալ՝ Խառն ժողովին միջնորդութեամբը Բ. Դրան կըմատուցուի, որ կ'անուանէ զՊատրիարքը:

118. Նորընտիր Պատրիարքը՝ գեռ Բ. Դրան չը ներկայացած՝ Եկեղեցւոյ մէջ և Ընդհանուր ժողովին առջև հանդիսաւոր ուխտ կ'ընէ սոյն օրինակ. «Առաջի Աստուծոյ և առաջի Ազգիս Հայոց ներկայացեալ յԸնդհանուր ժողով՝ ուխտեմ հաւատարիմ մնալ Ազգային Սահմանադրութեան և հըսկել բոլոր սրտով նորին անթերի գործադրութեան»:

119. Եթէ Պատրիարքը Սահմանադրութեան դէմ պակասութեան մը մէջ գտուի, ամբաստանութեան տակ կ'ընկնի:

120. Պատրիարքին վրայ ամբաստանութիւն մը՝ կամ ազգային երեսփոխանաց կողմէն, կամ Կրօնական ժողովին և կամ Քաղաքական ժողովին կողմէն կընայ ըլլալ:

Երբ այսպիսի ամբաստանութիւն մը պատահի, Ընդհանուր ժողովը կը գումարուի և իր մէջէն քննիչ յանձնաժողով մը կը կարգէ 21 հոգիէ բաղկացեալ (Շ Եկեղեցական, Շ թաղական

երեսփոխան, Շ գաւառական երեսփոխան) որոնք  
ամբաստանողաց մէջէն պէտք չէ որ ըլլան:

Քննիչ յանձնաժողովը՝ ամբաստանութիւնը  
քննելով, տեղեկազիր կուտայ Ընդհանուր ժողո-  
վին որ գաղանի քուէարկութեամբ կ'որոշէ խնա-  
դիրը: Եթէ այս որոշումը՝ որ ստորագրեալ պէ-  
տք է ըլլայ որոշման կողմը քուէ տուղ ժողո-  
վականներէն, Պատրիարքի հրաժարումը վճռած  
ըլլայ, երկու ժողովոց ատենապետները Պատրի-  
արքին: Կը ներկայացնեն, որ յայնժամ Ազգային  
որոշ կամքը տեսնելով հրաժարականը տալու  
պարտաւորեալ է:

121. Հրաժարեալ Պատրիարքը վիճակաւոր  
եպիսկոպոսաց կարգը կ'անցնի և ըստ այն կը  
տնօրինուի Խառն ժողովին կողմէն:

Գ. Ընտրութիւն Առաջնօրդաց

122. Առաջնորդի ընտրութիւնը գաւառա-  
կան Ընդհանուր ժողովին մէջ կ'լլայ նոյն և նը-  
ման Պատրիարքի ընտրութեան:

Սոյն ընտրութիւնը գաւառական Խառն ժո-  
ղովին միջնորդութեամբ վաւերական տեղեկա-  
գրով կը ծանուցուի Պատրիարքին, որ կեղրոնա-  
կան Խառն ժողովին հաւանութեամբը կ'անուա-  
նէ զԱռաջնորդը:

123. Եթէ Առաջնորդը Սահմանադրութեան  
դէմ պակսութեան մը մէջ գտուի, ամբաստա-  
նութեան տակ կ'ընկնի Պաւառական ժողովոց

կողմէն, և քննութիւնը ըստ 120 յօդուածին ըլլալով՝ դատը կեղրոնական խառն ժողովին մէջ կը տեսուի, որ ըստ պատշաճին կը տրօրինէ:

Ե. Ընտրութիւն ժողովականաց եւ խորհրդականաց

124. Ընդհանուր ժողովը կ'ընտրէ Կրօնական ու Քաղաքական ժողովոց անդամները:

Քաղաքական ժողովը կ'ընտրէ Տեսուչ խորհրդոց անդամները բաց ՚ի Դատաստանական խորհրդէն, որոյ եկեղեցական անդամները Կրօնական ժողովը կ'ընտրէ:

Դատաստանական խորհրդին անդամները 40 տարին լրացուցած և ամուսնացեալ անձինք պէտք է որ ըլլան:

Թաղին ընտրողները կ'ընտրեն Թաղական խորհրդին անդամները թաղին Ընտրողական ժողովին ներկայութեանը, ըստ ընտրական օրինաց:

Սոյնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ ժողովականաց և խորհրդականաց ընտրութիւնը:

125. Ընդհանուր ժողովը հինգ տարին անգամ մը մարտի վերջը կը լուծուի և ապրիլի ըսկիզբը կը նորոգուի:

Կրօնական ու Քաղաքական ժողովներն ու Տեսուչ խորհրդները ամեն տարի մարտի վերջը կիսով չափ միայն կը լուծուին և ապրիլի ըսկիզբը կը նորոգուին<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Առջի անգամին միայն՝ ժողովականաց եւ խորհրդականաց կէսին լուծումը վիճակով կորոշուի:

Թաղական ու թեմական խորհուրդները չորս  
տարին անգամ մը մարտի վերջը կը լուծուին  
և ապրիլի ըսկիզբը կը նորոգուին:

Սոյնպէս կ'ըլլայ և գաւառներու մէջ ժողո-  
վոց և խորհրդոց նորոգումը:

126. Ազգային երեսփոխաններն ու թաղա-  
կան և թեմական խորհրդականները անմիջապէս  
վերընտրելի են նոյն պաշտօնին համար: Իսկ  
կրօնական ու Քաղաքական ժողովոց և Տեսուչ  
խորհրդոց անդամները՝ որ անմիջապէս վերըն-  
տրելի չեն նոյն պաշտօնին համար, ուրիշ որ և  
է պաշտօնի համար վերընտրելի են:

Սոյնպէս է նաեւ գաւառներու մէջ գաւա-  
ռական պաշտօնաւորաց վերընտրութիւնը:

127. Ամեն անգամ որ ազգային ժողովներն  
ու խորհուրդները նորոգուին, նորընտրիը անդա-  
մոց ցանկը օրագրի միջոցով պէտք է հրատա-  
րակուի:

Գլուխ Դ.

### ՆԵՐԲԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ԺՈՂՈՎԸՑ ԵՒ ԽՈՇՀՐԴՈՑ

1. Պատօնական կանոնի

128. Ամեն ժողով և խորհուրդ պէտք է ու-  
նենայ ատենական գիւան մը, որ կը բաղկանայ  
ատենապետէ մը, ատենադրպետէ մը և պէտք ե-

դածին չափ փոխանորդներէ, դորսնք ժողովն իր մէջէն կընտրէ:

Առջին անգամին երիցագունին ատենապետութեամբը և կրտսերագունին ատենադպրութեամբը նիստ կընէ և իր դիւանը կը կազմէ:

129. Ատենապետին պաշտօնն է՝ ատեանը բանալ և գոցել, ատեանին ներքին վարչութիւնը տնօրինել, վիճաբանութիւններն ուղղել կանոնադրութեանց պահպանութեանը հըսկել և ատենաբաններուն կարգով խօսք տալ:

130. Ատենադպրին պաշտօնն է՝ ատեանին մէջ խօսուածները գրի առնել, եղած որոշումներն ու արուած պատճառաբանութիւնները ճշդիւ նշանակել և ատենագրութիւնը հետեւեալ ատեանին ներկայացնել, և ամեն ատեանին խընդիրներու ցանկը պատրաստել առաջնութեան կարգով:

131. Ատենապետի ու ատենադպրի փոխանորդներուն պաշտօնը պիտի ըլլայ անոնց ներկայ չը գտուած ատեաններուն մէջ զանոնք փոխանակել:

132. Ատենական դիւանը տարին անգամ մը կը նորոգուի և անգամներն անմիջապէս վերընտրելի են:

Բնդհանուր ժողովին դիւանը 5 տարին անգամ մը Բնդհանուր ժողովին հետ կնորոգուի:

## 2. Ատենական կանոնն

133. Կրօնական ու Քաղաքական ժողովներն

ու Տեսուչ խորհուրդները շաբաթն անդամ մը կը գումարուին ի Պատրիարքարան որոշեալ օր մը:

Ատենապետները կրնան ուրիշ օր մը՝ կամ ուրիշ տեղ մը արտաքոյ կարգի ժողով կամ խորհուրդ գումարել ստիպողական պարագայի մէջ:

Բնդիանուր ժողովին գումարուելու օրը լը-  
րագրի միջոցով պէտք է ծանուցուի զսնէ երեք  
օր առաջ:

134. Առանց մեծագոյն մասի ներկայու-  
թեան նիստը անբաւական կը համարուի և խըն-  
դրի մը վրայ վերջին որոշում չըկրնար արուիլ:

135. Առանց ատենապետի և ատենադպրի  
ատեան չըկրնար բացուիլ:

Երբ մեծագոյն մասը ներկայ ըլլալով՝ ա-  
տենապետը կամ ատենադպիրը և անոնց փոխա-  
նորդները ներկայ չըլլան, երիցագունին ատենա-  
պետութեամբն ու կրտսերագունին ատենադըլ-  
րութեամբը կը բացուի ատեան:

136. Ատենապետէն խօսք չը խնդրած և  
չառած ներելի չէ խօսիլ ատեանի մէջ:

137. Խնդիր մը առաջարկել ուզողը՝ նախ  
խնդիրներուն ցանկին մէջ պէտք է գրել տայ  
խնդիրն ու իր անունը, և երբ կարգը գայ, այն  
ատեն իրաւունք ունի խօսալու նոյն խնդիրն  
վրայ և ժողովը զանի մտիկ ընելու պարտաւոր  
է: Այս կարգը այն ատեն միայն կրնայ փոխ-  
ուիլ՝ երբ ուրիշ խնդիր մը պատահի, որոյ ըստի-  
պողական ըլլալը ժողովն որոշէ:

138. Խնդիր մը լաւ մը քննուելէն, վիճուելէն  
և անոր վրայ ամենուն կարծիքը առնուելէն ետքը  
պէտք է որ քուէի դրուի, և որոշումը ներկայ  
գտուող անդամներուն մեծագոյն մասին հաւա-  
նութեամբը կը տրուի:

139. Երբ ձայները հաւասար գանչ եթէ նա-  
խագահը ներկայ է՝ նախագահին կողմը կը հակի  
որոշումը, եթէ ոչ՝ ատենապետին կողմը:

140. Խառն ժողովին մէջ խնդրի մը որո-  
շում տալու համար պէտք է որ երկու ժողո-  
վները զատ զատ քուէարկութիւն ընեն. Երբ եր-  
կուքին ալ մեծագոյն մասը միեւնոյն որոշումն  
ըրած ըլլայ՝ խնդրը կը լուծուի. իսկ հակառակ  
դիպուածի մէջ անհամաձայնութիւն կը սեպուի  
երկու ժողովոց մէջ, և տնօրէնութիւնը Ընդհա-  
նուր ժողովին կը մնայ (Յօդ. 1, 12):

141. Ժողովներուն մէջ հրեէ ընտրութիւն,  
դատաստան, ազգային տուրքի հաստատութիւն  
Սահմանադրութեան վերաքննութիւն, գաղտնի  
քուէարկութեամբ կ'որոշուի. նոյնպէս կ'ըլլայ  
նաեւ ուրիշ հրեէ խնդրի մէջ երբ գաղտնի քու-  
էարկութիւն պահանջող ըլլայ:

142. Խորհրդոց ատենապետները կը նան  
մենակ կամ ըստ հարկին խորհրդական մալ  
հետ առնելով ուզած ատեննին Քաղաքական ժո-  
ղովին մէջ ներկայանալ և իրենց խորհրդին վե-  
րաբերեալ գործերուն վրայ խօսիլ, բայց քուէ  
չունին:

143. Ժողովներու և խորհուրդներու մէջ ամեն նիստ իր ատենագրութիւնը պէտք է ունենայ, զոր ներկայ գտուող անդամները կ'ստորագրեն:

Ընդհանուր ժողովին ատենագրութիւնները Պատրիարքն ու դիւանին անդամները միայն կ'ըստորագրեն:

Ընդհանուր ժողովին անդամները ներկայութեան թուղթի մը վրայ կըստորագրեն ժողովաբանը մտած ատենանին:

144. Ամեն ժողով և խորհուրդ իր տեսչութեան կամ մատակարարութեան վրայ տարեկան ընդհանուր տեղեկագիր պէտք է որ տայ իր համարառու ժողովին կամ խորհուրդին:

Սոյն տեղեկագիրը բոլոր անդամոց կողմէն ըստորագրեալ պէտք է ըլլայ:

145. Երեք անգամ իրարու վրայ առանց բանաւոր պատճառ մը գրով իմացնելու ներկայ չըգտուող ժողովականին կամ խորհըրդականին անունը ատենագրութեան մէջ կը յիշուի, և ժողովին կամ խորհըրդին կողմէն ատենատեղը անոր կը գրէ չը գալուն պատճառը հարցնելու համար. եթէ պատասխան չընդունի ժողովը, կամ ընդունած պատասխանը զինքը գոհ չընէ, երկրորդ գրութեամբ ժողովին դատումը կ'իմացնէ անոր և կը յորդորէ որ յաջորդ ատենանին ներկայ գտուի. եթէ նորէն չը ներկայանայ, այնպիսին իր ազգասիրական պարտուցը մէջ

զանցառութիւն ըրած ըլլալով՝ իր զանցառութիւնը հրաժարական կը սեպուի. Եթէ այդպիսեաց թիւը մինչև Յ հասնի, ժողովին նախագահը կամ ատենապետը անոնց տեղ զանոնք ընտրող ժողովին ուրիշ անդամներ կը խնդրէ<sup>1)</sup>:

Նոյնը պէտք է ընէ երբ նոյն թուով ժողովականք կամ խորհրդականք պակախն թէ վախճանման և թէ հրաժարման պատճառով:

#### Գլուխ Ե.

### ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

146. Սահմանադրական ժողովով որոշեալ Ազգային Սահմանադրութիւնը առաջին անգամ առժամանակեայ ընդհանուր ժողովով կ'ընդունուի ու կ'ըստորագրուի, և յետոյ սահմանադրականապէս կազմեալ Ընդհանուր ժողովը դաբճեալ ըստորագրելով՝ Ազգին կողմէն կը վաւերացնէ զանի և վճռաբար կը հաստատէ:

Սահմանադրութեան ըստորագրեալ ընագիրը ազգային դիւնաւատան մէջ կը պահուի և օրինակը տպագրութեամբ կը հրատարակուի:

147. Ազգային Սահմանադրութիւնը ազգովին ընդունուելէն ետքը՝ Ազգին որոշ ու յայտնի կամքը կը սեպուի, և անոր պարունակուած արամադրութիւնքը անփոփոխելի են ազգային Վարչութեան կողմէն:

<sup>1)</sup> Այս արամադրութիւնը Ընդհանուր ժողովին վերաբերեալ չէ:

Իսկ՝ երբ ազգային վարչութիւնը Սահմանադրութեան գործադրութեանը մէջ երկար փորձով լինչ ինչ յօդուածներու փոփոխութեան պէտք տեսնէ, ինք միշտ համեմատ վարուելով անոնց, իր ընթացքին երրորդ տարւոյն վերջերը միայն քննութեան առաջարկութիւն կընայ ընել Ընդհանուր ժողովին:

148. Երբ Ընդհանուր ժողովը վերաքննութեան առաջարկութիւն ընդունի, Վերաքննութեան ժողով մը կը կազմէ սա կերպով.

Կրօնական և Քաղաքական ժողովներէն չորսական հոգի, Տեսուչ խորհուրդներէն երեքական հոգի, և ասոնցմէ դուրս 10 հոգի զօր Ընդհանուր ժողովը իր մէջէն կամ գուրսէն կ'ընտրէ, ընդամենը 30 հոգի:

148. Վերաքննութեան ժողովը ազգային վարչութեան կողմէն եղած դիտողութիւնները միայն քննութեան տակ առնելով, պէտք եղած փոփոխութիւնները կ'որոշէ և Պատրիարքին միջնորդութեամբը Ընդհանուր ժողովին կը ներկայացնէ:

150. Սահմանադրութեան վերաքննութիւնը Ազգին համար անընդունելի է, երբ հիմնական ըսկըբանց տրամադրութեանցը համաձայն չըլլայ, այն սկզբանց՝ որով ապահովեալ են ազգին իրաւունքները, իրաւունք՝ որոնց վրայ ազգն անդամ չունի իշխանութիւն անօրէնութեան զիմիանգամայն պարտիք են:

ԲԱՇԽՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

Պ Օ Լ Ի Ս

	Թաղ	Կեղեցի Երեսփոխանաց թիւ.	
1	Գումքափու	Մայր եկեղեցի	24
2	«	Ս. Յարութիւն	2
3	Կէտիկփաշա	Ս. Յովհաննէս	6
4	Եէնիքարու	Ս. Թագ. և Բարթողիմ.	4
5	Սամաթիա	Ս. Գէորգ	15
6	«	Ս. Յակոբ	1
7	Նարլքափու	Ս. Յովհաննէս	
	Մաքըի գեղ	Ս. Ստեփան	
	Ա. Ստեփան	Ս. Աստուածածին	
	Ա. Եօրկի	Ս. Աստուածածին	
8	Թօփափու	Ս. Նիկողայոս	2
9	Քարակէօմրիւլ	Ս. Յ. Ոսկեբերան	1
10	Պալատ	Ս. Հրեշտակապետ	15
11	Էյիւպ	Ս. Աստուածածին	1
12	«	Եղիա	1
13	Խասդիւղ	Ս. Ստեփան	15
14	Քասըմփաշա	Ս. Յակոբ	1
15	Բերա	Ս. Երրորդութիւն	
	Ղալաթիա	Ս. Լուսաւորիչ	
16	Պէշիկթաշ	Ս. Աստուածածին	10
17	Օրթագիւլ	Ս. Աստուածածին	14
18	Քորուչէշմէ	Ս. Խաչ	
	Հիսար	Ս. Սանդուխտ	
	Միրկիւն	Ս. Երեք մանկունք	
	Նորգիւղ	Ս. Աստուածածին	
	Պէօյիւքտէրէ	Ս. Հովիսիմէ	


19	$\left\{ \begin{array}{l} \text{Պէյքօղ} \\ \text{Քանտիլլի} \end{array} \right.$	Ա. Նիկողայոս Ա. Ա. Առաքելոց		1
20	$\left\{ \begin{array}{l} \text{Քուզկունճուք} \\ \text{և իճատիէ} \end{array} \right.$	Ա. Լուսաւորիչ		2
21	Ոսկիտար	Ա. Կարապետ		8
22	$\left\{ \begin{array}{l} \text{«} \\ \text{Ալէմտաղ} \end{array} \right.$	Ա. Խաչ Ա. Նշան		11
23	Քաղկեդոն	Ա. Թագաւոր		1
24	Քարթալ	Ա. Նշան		1
<i>Հնդամենը</i>				<u>160</u>

## Գ Ա Ի Ա Ռ Ք

Առաջնորդ.	Երեսփիսխ.	Առաջնորդ.	Երեսփիսխ.
վիճակ	թիւ	վիճակ	թիւ
1 Երուսաղէմ	1	25 Ակն	1
2 Եղիպտոս	1	26 Տիգրիկ	1
3 Բերիա	1	27 Մալաթիա	1
$\left  \begin{array}{l} \text{Կիպրոս} \\ \text{Սիս} \end{array} \right.$	1	28 Կիւրին	1
4 $\left\{ \begin{array}{l} \text{Տարսոն} \\ \text{Սիս} \end{array} \right.$	1	29 Անթէպ	1
5 Մարաշ	1	30 Քիլիս	1
6 Հաճին	1	31 Շապին քարահիս.	1
7 Զէյթուն	1	32 Սեբաստիա	2
8 Ատանա	1	33 Եւգովկիա	1
9 Եղեսիա	1	34 Մարսըվան	1
10 Տիգրանակերտ	1	35 Ամասիա	1
11 Քիւրտիստան	1	36 Տրապիզոն	1
12 Պաղտատ	1	37 Ճանիկ	1
13 Բաղէշ	1	38 Եօդղատ	1
14 Վան	3	39 Կեսարիա	2
		40 Գաղատիա	1

15	Աղթամար	1	41	Կուտինա	1
16	Կարս	1	42	Զմիւռնիա	1
17	Մուշ	2	43	Պուսա	1
18	Երզընկա	1	44	Պանտըրմա	1
19	Բաբերդ	1	45	Նիկոմիդիա	3
20	Կարին	2	46	Ռօստոսթօ	1
21	Քարբերդ	3	47	Աղբիանուպօլիս	1
22	Արաբկեր	1	48	Վալաքիա	1
23	Բալու	1	49	Մոլտավիա	1
24	Գեղի	1	50	Վառնա <sup>ա)</sup>	1

Ընդամենը 60



\* ) Ժամանակի լնթացքում Թիւրքիան կորցրեց Կարս, Վառնա քաղաքները և մի քանի փոքր գաւառներ, ուրիշն և նրանց մասնակցութիւնն էլ վերացաւ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՆԴԱՄՔ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԲԱՍՏԻՈՅ Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅ ԽԱՍԳԻՒՂԻ	ՅՈՎՃԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱԼԱԹԻՈՅ Տ. ՅՈՎՅԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ
---	--

Տ. ՅՈՎՃԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱՅ  
 ՀԻՒՆՔԵԱՐՊԵՅՑԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՏԻՒՐԻԻ ԱՇՆԱՆԵԱՆ Պ. ԻՒՐԹԻՒՀԵԱՆ Կ. Ս. ՄԻՍԱՔԵԱՆ Վ. ՍԻՒՐԵՆԵԱՆ Յ. ՓԵՇՏԸՄԱԼՃԵԱՆ Ս. ՔՌԹԻԿԵԱՆ Բ.	ԱՂԱԹՈՆ Մ. ԵԱՂՈՒՊԵԱՆ Ե. ՄԻՆԱՍ Մ. ՌՈՒՄԻՆԵԱՆ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ Ե. ՔԱՅՍԵՐԵԱՆ Թ. ՕՏԵԱՆ Գ. Ս.
---	---

Դաւթաթիւ. 20 մայիս 1860.

Ազգային Ընդհանուր ժողովին միաձայն հաւանութեամբն ընդունուած  
 և ըստորագրուած։ Կ. Պօլիս, ի Պատրիարքարան Հայոց,

24 Մայիս 1860.

13355

2013

**ԳԻՒՆ Ե 15 ԿՐՊ.**

Դիմել Տիֆլիսъ, Николаевская пл. № 3,  
Айку Теръ-Астվածառնу.